# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

## 06.09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-17/8 գնման պայմանագրի

ք. Երևան 04.02.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի՝կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արիովշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սեյսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշումը և Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 06.09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-17/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքներից չկատարված (մնացորդային) և 2020թ. ընթացքում Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների գինը սահմանել 124 283 860 (**մեկ հարյուր քսանչորս միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր վաթսուն**) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

բ) Հաստատել 2020թ. հատկացված գումարի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածներ N1-ի և N2-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N1-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N2-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<Արիովշին>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/1 շենք, բն.14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011011872 | Հ/Հ 1150007143333380 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 00110978 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| Ա. Մկրտչյան (ստորագրություն) | Ա. Սեյսյան (ստորագրություն) |

*Հավելված N1*
*06.09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8 պայմանագրի*
*Օկ.02 2020թ. կնքված N 7 համաձայնագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի**
**հիմնանորոգման աշխատանքների**

**ըստ աշխատանքների ծավալների**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով) | Աշխատանքների կատարման ժամկետը մինչև |
|---|---|---|
| 1 | 31 084 225 | 30.03.2020թ. ներառյալ |
| 2 | 80 366 800 | 30.06.2020թ. ներառյալ |
| 3 | 100 051 100 | 30.09.2020թ. ներառյալ |
| 4 | 124 283 860 | 20.11.2020թ ներառյալ |

**ըստ աշխատանքների առանձին տեսակների**

| N ը/կ | Կատարվելիք աշխատանքների անվանումը | Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|
| 1 | Ներքին հաղորդակցուղիների (օդափոխություն, ջեռուցում) կառուցման աշխատանքներ, ներքին հարդարման աշխատանքների շարունակություն | 30.03.2020թ. ներառյալ |
| 2 | Ներքին հաղորդակցուղիների կառուցման ավարտ, ներքին հարդարման աշխատանքների շարունակություն | 30.06.2020թ. ներառյալ |
| 3 | Նեքին հարդարման աշխատանքների ավարտ, տարածքի բարեկարգման մեկնարկ | 30.09.2020թ. ներառյալ |
| 4 | Տարածքի բարեկարգման աշխատանքների ավարտ | 20.11.2020թ ներառյալ |

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ.**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011872
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Արիովշին>> ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
թաղամաս, 17/1 շենք, բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500071433333380
ՀՎՀՀ 00110978

Տնօրեն՝
________ Ա. Մելոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N2*
*06 09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-17/8 պայմանագրի*
*04.02.2020թ. կնքված N 7 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ | | 31 084 225 | 31 084 225 | 80 366 800 | 80 366 800 | 80 366 800 | 100 051 100 | 100 051 100 | 100 051 100 | 124 283 860 | 124 283 860 | 124 283 860 | 124 283 860 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011872
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Արհովշին>> ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
թաղամաս, 17/1 շենք, բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Տնօրեն՝

Վ. Մելքյան
(ստորագրություն)